«ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ» ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՎԾ-ԳՀԱՊՁԲ-20/04-1

«05» փետրվար 2020թ.

ք. Վեդի

«Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն Վ. Մաթևոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Լեյկո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ալեքսանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ կնկելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1020949 (մեկ միլիոն քսան հազար ինը հարյուր քառասունինը)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[17] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

---

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցներր Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքը մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասները այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել

ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Վեղու ծննդատուն» ՓԲԸ	«ԼԵՅԿՈ» ՍՊԸ
ք.Վեղի, Գայի 1	ք. Երևան Ֆուչիկի 27/14
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220123330981000	Հ/Հ 205002215023
ՀՎՀՀ՝ 04104551	ՀՎՀՀ 01224924
Տնօրեն՝ Վ. Մաթևոսյան	Տնօրեն՝ Գ. Ալեքսանյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն)

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել հավելվածներ՝ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված 1

«05» [illegible] 2020թ. կնքված

N ՎԾ-ԳՀԱՊՁԲ-20/04-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի

Հ/Բ	CVP կոդ	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
10	33141142 /502	ներարկիչ ասեղով 3մլ, հատ	ներարկիչ ասեղով 3մլ Արտադրված է ԼԵՅԿՈԱԼԵՔՍ ՍՊԸ-ի համար	Ներարկիչ 3մլ չափսի: եռակոմպոնենտ, ասեղ: Ներարկիչը պատրաստված է թափանցիկ, ոչ տոքսիկ նյութից: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության առկայություն	հատ	12.9	77400	6000	ք.Վեդի Գայի 1	6000	
12	33141142 /504	ներարկիչ (ինսուլինի) 1մլ, հատ	ներարկիչ(ինսուլինի)1մլ, Արտադրված էԼԵՅԿՈԱԼԵՔՍ ՍՊԸ-ի համար	Ներարկիչ ինսուլինային 1մլ, ասեղ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետի առկայություն	հատ	12.89	7734	600	ք.Վեդի Գայի 1	600	
17	33141158 /503	վիրաբուժական ձեռնոցներ ստերիլ N 7.5, զույգ	վիրաբուժական ձեռնոցներ ստերիլ, Արտադրված է ԼԵՅԿՈԱԼԵՔՍ ՍՊԸ-ի համար	Ձեռնոցներ բժշկական՝ ստերիլ, տալկով N 7,5: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետի առկայություն	զույգ	89.9	134850	1500	ք.Վեդի Գայի 1	1500	
18	33141158 /504	վիրաբուժական ձեռնոցներ ստերիլ N 8.0, զույգ	վիրաբուժական ձեռնոցներ ստերիլ, Արտադրված է ԼԵՅԿՈԱԼԵՔՍ ՍՊԸ-ի համար	Ձեռնոցներ բժշկական՝ ստերիլ, տալկով N 8.0: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետի առկայություն	զույգ	89.9	44950	500	ք.Վեդի Գայի 1	500	
20	33141178 /501	Սիստեմա ն/ե	Սիստեմա ն/ե,Արտադրված է ԼԵՅԿՈԱԼԵՔՍ ՍՊԸ-ի համար	Սիստեմա ն/ե-լրացուցիչ դեղորայքի ներարկման հնարավորությամբ: Ֆորմատ-հատ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետի առկայություն	հատ	46	46000	1000	ք.Վեդի Գայի 1	1000	
27	33141115 /501	բժշկական բամբակ 50գր, հատ	բժշկական բամբակ, ԼԵՅԿՈԱԼԵՔՍ ՍՊԸ	Բամբակ ոչ ստերիլ, սպիտակ, նախատեսված բժշկական նպատակների համար: Մեկ տուփում պարունակող բամբակի ծավալը ոչ պակաս քան 50գր: Պահպանման պայմանների ապահովվում: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետի առկայություն	հատ	74	51800	700	ք.Վեդի Գայի 1	700	
28	33141114 /501	բժշկական թանզիֆ	բժշկական թանզիֆ, Նավտեքս	Բժշկական թանզիվ՝ նախատեսված բժշկական նպատակների համար: Չափսերը՝ լայնությունը 90սմ, երկարությունը 1000 մետր, խտությունը՝ 30գր/1մ2:	մետր	73	292000	4000	ք.Վեդի Գայի 1	4000	
32	33141212 /505	Բժշկական գլխարկ, հատ	Բժշկական գլխարկ,Արտադրված է ԼԵՅԿՈԱԼԵՔՍ ՍՊԸ-ի համար	Բժշկական գլխարկներ մեկանգամյա օգտագործման՝ ոչ կտորային պոլիպրոպիլենից, վիրաբուժական, հիպոալերգիկ: Գլխարկի եզրերը հավաքված են ռեզինով:	հատ	7.99	7990	1000	ք.Վեդի Գայի 1	1000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ.

36	33141174 /502	Գինեկոլոգիական հավաքածուներ	Գինեկոլոգիական հավաքածուներ,ԼԵՅԿՈԱԼԵՔՍ ՍՊԸ	Գինեկոլոգիական հավաքածուներ /տակդիր, Ֆոլկմանի գդալիկ, ստերիլ ձեռնոց, Կուսկոյի հայելի, ցիտոլոգիական խոզանակ, առարկայական ապակի 25.4 x76.2մմ, 1 մմ հաստությամբ, խավարեցված մասով՝ գրառումների համար և այլ պարագաներ/, հատ	հատ	310	186000	600	ք.Վեդի Գայի 1	600
39	33141111 /501	կպչուն սպեղանիներ կտորից, հիպոալերգիկ 2,5սմx5մ, հատ	կպչուն սպեղանիներ կտորից, հիպոալերգիկ, ԼԵՅԿՈԱԼԵՔՍ ՍՊԸ	Լեյկոպլաստ: Տեսակը՝ Սովորական, կտորից, հիպոալերգիկ 2,5սմx5մ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետ առկայություն	հատ	118.99	59495	500	ք.Վեդի Գայի 1	500
52	33141211 /510	Ավտոկլավի թեսթ ժապավեն 13-15մմ երկարությամբ, հատ	Ավտոկլավի թեսթ ժապավեն 13-15մմ երկարությամբ, հատ,Ստերիկոնդ	Ավտոկլավի թեսթ ժապավեն 13-15մմ երկարությամբ ինդիկատորային թեստ: Ֆորմատ-ընդունել որպես 3 տուփ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետի առկայություն	տուփ	3000	9000	3	ք.Վեդի Գայի 1	3
58	33141410 /502	Տարա մեզի անալիզի համար ստերիլ, 100մլ, հատ	Տարա մեզի անալիզի համար ստերիլ, 100մլ, ԼԵՅԿՈԱԼԵՔՍ ՍՊԸ	Անալիզների համար պլաստիկ տարրա, ստերիլ և կափարիչով: Ծավալը՝ 100-120մլ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետի առկայություն	հատ	36.99	55485	1500	ք.Վեդի Գայի 1	1500
59	33141211 /517	Սավան 40սմ x 50մ	Սավան 40սմ x 50մ ԼԵՅԿՈԱԼԵՔՍ ՍՊԸ	Սավան միանվագ օգտագործման ոչ գործվածքային նյութից,չափսը՝ 40սմ x 50մ, ռուլոն	հատ	1750	35000	20	ք.Վեդի Գայի 1	20
72	33121180 /501	արյան ճնշման չափման սարք	արյան ճնշման չափման սարք Չինաստան	Տոնոմետր ֆոնենդոսկոպով- ԶՃ չափման սարք, ցուցիչով, մոնժետով և ֆոնենդոսկոպով: Ֆորմատ- հատ, Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի առկայություն	հատ	2649	13245	5	ք.Վեդի Գայի 1	5
ԸՆԴԱՄԵՆԸ				***	***	***	1020949	***	***	***

Մատակարարման ժամկետները և քանակները. Պայմանագրի շրջանակներում Ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2020թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների: Կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, սահմանվում է 20 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում

ԳՆՈՐԴ
«Վեդու ծննդատուն» ՓԲԸ
ք.Վեդի, Գայի 1
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
հ/հ՝ 220123330981000
ՀՎՀՀ՝ 04104551
Տնօրեն՝ Վ. Սաթևոսյան

(ստորագրություն) Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
ԼԵՅԿՈԱԼԵՔՍ ՍՊԸ
ք. Երևան Դեղձի 27/14
Փեկոբանկ «ՄԵՔ»
հ/հ 20500221509
ՀՎՀՀ 01224924
Տնօրեն՝ Գ. Ալեքսանյան

(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2

«05» [illegible] 2020թ. կնքված

N ՎԾ-ԳՀԱՊՁԲ-20/04-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՑՈՒՅՑ

Հերթերով նախատեսված չ/հ	գնումների պլանում նախատեսված միջոցառման ծածկագիր ըստ գնումների դասակարգման (CPV)	Անվանում	վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
10	33141142	ներարկիչ ասեղով 3մլ, հատ	0	0	12900	12900	25800	25800	38700	51600	51600	64500	64500	77400	77400
12	33141142	ներարկիչ (ինսուլինի) 1մլ, հատ	0	0	1289	1289	2578	2578	3867	3867	5156	6445	6445	7734	7734
17	33141153	վիրաբուժական ձեռնոցներ ստերիլ N 7.5, զույգ	0	0	0	44950	44950	44950	89900	89900	89900	89900	89900	134850	134850
18	33141154	վիրաբուժական ձեռնոցներ ստերիլ N 8.0, զույգ	0	0	0	8990	8990	8990	8990	26970	26970	26970	26970	44950	44950
20	33141178	Միստեմա ն/ե	0	0	9200	9200	18400	18400	27600	27600	36800	36800	36800	46000	46000
27	33141115	բժշկական բամբակ 50գր, հատ	0	0	14800	14800	14800	29600	29600	29600	44400	44400	44400	51800	51800
28	33141111	բժշկական թանզիֆ	0	0	73000	73000	73000	146000	146000	146000	219000	219000	219000	292000	292000
32	33141215	բժշկական գլխարկ, հատ	0	0	0	0	3995	3995	3995	3995	3995	7790	7990	7990	7990
36	33141172	գինեկոլոգիական հավաքածուներ	0	0	62000	62000	62000	62000	124000	124000	124000	124000	186000	186000	186000
39	33141111	կպչուն սպեղանիներ կտորից, հիպոալերգիկ 2,5սմx5մ, հատ	0	0	23798	23798	23798	23798	23798	47596	47596	47596	59495	59495	59495
52	33141210	Ավտոկլավի թեսթ ժապավեն 13-15մմ երկարությամբ, հատ	0	0	0	0	0	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000

58	33141410/502	Տարա մեզի անալիզի համար ստերիլ, 100մլ, հատ	0	0	18495	18495	18495	18495	36990	36990	36990	36990	55485	55485	55485
59	33141211/517	Սավան 40սմ x 50մ	0	0	0	0	17500	17500	17500	17500	17500	35000	35000	35000	35000
72	33121180/501	արյան ճնշման չափման սարք	0	0	0	7947	7947	7947	7947	7947	13245	13245	13245	13245	13245
ԸՆԴԱՄԵՆԸ			0	0	215482	277369	322253	419053	567887	622565	726152	761636	854230	1020949	**1020949**

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ
«Վեդու ծննդատուն» ՓԲԸ
ք.Վեդի, Գայի 1
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220123330981000
ՀՎՀՀ՝ 04104551
Տնօրեն՝ Վ. Մաթևոսյան

(ստորագրություն) Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ԼԵՅԿՈ» ՍՊԸ
ք. Երևան Ֆուչիկի 27/14
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 205002215023
ՀՎՀՀ 01224924
Տնօրեն՝ Գ. Ավետիսյան

(ստորագրություն) Կ.Տ